ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԵՊԼՀ ռեկտոր՝
պրոֆ. Ա. Տ. Զոլյան

ԿԱՐԳ

ԵՊԼՀ-ի աշխատակիցներին և ուսանողներին ''Անցումային քարտ'' -ի տրամադրման և շահագործման վերաբերյալ

Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն կարգը կարգավորում է ԵՊԼՀ-ի և անցումային քարտը շահագործող աշխատակիցների ու ուսանողների միջև համալսարանում հաճախելիության փոխհարաբերությունները, ամսեկան հաշվետախտակը ավելի ճշգրիտ կազմելու համար: Անցումային քարտի միջոցով միայն աշխատակիցը կամ ուսանողը կարող է մուտք և ելք անել համալսարան:

1.2 Անցումային քարտերի տրամադրումը, հաշվառումը և սպասարկումը իրականացվում է համալսարանի կադրերի բաժնի կողմից:

1.3 Անցումային քարտը (այսուհետ՝ քարտ) ԵՊԼՀ-ի (այսուհետ համալսարան) կողմից համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին տրամադրվող քարտ է աշխատանքային կարգապահությունը, հաճախելիությունը ստուգելու և վերահսկելու նպատակով:

1.4 Անցումային քարտը տրամադրվում է համալսարանի կադրերի բաժնի կողմից աշխատակիցներին՝ աշխատանքի ընդունվելու, ուսանողներին՝ ուսանողական իրավունքների ձևակերպման պահից:

Աշխատակիցները աշխատանքից ազատվելու դեպքում, իսկ ուսանողները՝ ուսանողական իրավունքների դադարելու դեպքում պարտավոր են վերադարձնել քարտը կադրերի բաժին:

2. ''Անցումային քարտ'' -ի կիրառումը և պատասխանատվությունը աշխատակիցների կողմից

2.1 Անցումային քարտը տրամադրվում է համալսարանում հրամանագրված հիմնական և պայմանագրային հիմունքներով հրավիրված աշխատակիցներին և հանդիսանում է համալսարանի սեփականությունը:

2.2 Աշխատակիցները պետք է բարեխղճորեն օգտագործեն անցումային քարտը և զերծ պահեն այլ անձանց հանձնելուց, կորցնելուց և վնասելուց:

2.3 Անցումային քարտը աշխատակցին և տրվող միջոցն է համալսարան մուտք գործելու և դուրս գալու համար, որը հանդիսանում է աշխատակիցների հաճախելիությունը ստուգելու և հսկելու միջոց: Աշխատակիցները և ուսանողները պարտավոր են համալսարան մուտք գործելուց և դուրս գալուց գրանցեն քարտը անցակետում: Քարտը չգրանցելու դեպքու տվյալ օրվա հաճախումը աշխատանքի կարող է չհաշավարկվել ամսեկան հաշվետախտակում:

2.4 Անցումային քարտի տրամադրման ժամանակ աշխատակիցը ստորագրում է ''Անցումային քարտի տրամադրաման ստացական'' (տես կից հավելված):

2.5 Անցումային քարտը առաջին անգամ կորցնելու կամ շահագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում աշխատակիցը պարատվոր է վճարել 5000 ՀՀ դրամ, իսկ երկրորդ անգամ՝ 10.000 ՀՀ դրամ:

2.6 Քարտը ցանկացած ձևով վնասելու դեպքում, որը կխոչընդոտի հետագա օգտագործմանը, քարտը օգտագործողը պարտավոր է վճարել գումար սույն կարգի 2.5 կետում սահմանված չափով:

3.''Անցումային քարտ'' -ի կիրառումը և պատասխանատվությունը ուսանողների կողմից

3.1 Անցումային քարտը կարող է տրամադրվել համալսարանում բակալավրիական և մագիստրոսական ծրագրերով ուսանելու ընդունված և հրամանագրված ուսանողներին անվճար հիմունքներով:

3.2 Ուսանողները պետք է բարեխղճորեն օգտագործեն անցումային քարտը և զերծ պահեն այլ անձանց հանձնելուց (այդ թվում դասընկերներին), կորցնելուց և վնասելուց:

3.3 Անցումային քարտը ուսանողին իրավունք է վերապահում մուտք գործել համալսարանի տարածք.

3.4 Ուսանողը քարտը ստանալու պահից օգտագործում է քարտը, որը կարող է փակվել համալսարանի կողմից ուսանողի համալսարանից հեռացման կամ վարձը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում, կամ ցանկացած այլ հիմքով ուսանողական իրավունքների դադարեցման դեպքում: Տարեկաետման մեջ գտնվող և բանակ զորակոչված ուսանողների քարտերը կփակվեն ժամանակավորապես, և կրկին կվերաբացվեն վերականգնվելու դեպքում: Սույն կետում նշված դեպքերում ուսանողը ևս պարտավոր է քարտը վերդարձնել համալասրանի կադրերիի բաժին:

3.5 Անցումային քարտի տրամադրման ժամանակ ուսանողը ստորագրում է "Անցումային քարտի տրամադրաման ստացական" (տես կից հավելված):

3.6 Անցումային քարտը առաջին անգամ կորցնելու կամ շահագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում ուսանողը պարատվոր է վճարել 5000 ՀՀ դրամ, իսկ երկրորդ անգամ՝ 10.000 ՀՀ դրամ:

3.7 Քարտը ցանկացած ձևով վնասելու դեպքում, որը կխոչընդոտի այդ քարտի հետագա օգտագործմանը (այդ թվում այլ անձի կողմից), օգտագործողը պարտավոր է վճարել սույն կարգի 3.6 կետում սահմանված չափով գումար:

4. Եզրափակիչ դրույթներ

4.1 Սույն կարգը ուժի մեջ է մտնում ԵՊԼՀ ռեկտորատի կողմից ընդունվելուց և ռեկտորի կողմից այն հաստատվելուց հետո:

4.2 Անցումային քարտը աշխատակցին տրվում է համալսարանում իր աշխատելու ընթացքի համար, իսկ ուսանողին ամբողջ ուսումնառության համար: Քարտը, արտաքին վնասվածք չունենալու կամ օգտագործողից

անկախ պատճառներով խափանվելու դեպքում, կադրերի բաժնի պատասխանատու աշխատակցի համապատասխան հիմնավորող եզրակացության դեպքում՝ փոխարինվում է անվճար:

4.3 Անցումային քարտը մեխանիկորեն փակվում է աշխատակցի համար՝ հրամանով ազատվելու դեպքում, իսկ ուսանողի համար՝ ուսանողական իրավունքերի դադարեցման հրամանի հիման վրա:

4.4 Սույն կարգում փոփոխությունները կարող են կատարվել միայն ռեկտորատի համապատասխան որոշման հիման վրա:

4.5 Սույն կարգի իրագործման հսկողությունը իրականցվում է համալսարանի ռեկտորի աշխատակ³ զմի ղեկավարի կողմից

Հաստատված՝ ռեկտորատի 07.07.2011թ Հ 34 նիստով

Հավելված

ԵՊԼՀ անցումային քարտի

ՍՏԱՑԱԿԱՆ

նո_____

Ես՝ ԵրՊԼՀ-ի (աշխատակից, ուսանող)

_____

ընդգծել անուն, ազգանուն, հայրանուն

_____

կառուցվածքային ստորաբաժանում, ֆակուլտետ/ մագիստրատուրա- կուրս խումբ

ստանալով համալսարան մուտք գործելու ''Անցումային քարտ'' ը տեղեկացված եմ, որ այն հանդիսանում է ԵՊԼՀ սեփականությունը, պարտավորվում եմ այն օգտագործել բարեխղճորեն և անձամբ, չփոխանցել այլ անձանց, իսկ կորցնելու, օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում պարտավորվում եմ վճարել 5000 դրամ, իսկ երկրորդ անգամ՝ 10000 ՀՀ դրամ: Տեղեկցված եմ, որ համալսարանից ազատվելու , հեռացվելու պարտավոր եմ քարտը հանձնել իսկ ուսանողական իրավունքերիի դադարման (այդ թվում, ուսման վարձի պարտք ունենալու, ավարտելու) դեպքում անցումային քարտը փակվելու է: Այն ենթակա է վերաբացվման վերականգնման/ վարձի մուծումը կատարելուց հետո:

Ծանոթ եմ ԵՊԼՀ-ի աշխատակիցների և ուսանողներին ''Անցումային քարտ'' -ի տրամադրման և շահագործման վերաբերյալ կարգին

_____ _____

ստորագրություն (անուն, ազգանուն, հայրանուն)

'' '' _____20 թ